Հաստատում եմ ՀՀ ԱԻՆ
«Ճգնաժամային կառավարման
պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի
ռեկտոր Հ.Մաթևոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Ավան Աճառյան 1 հասցեում, 30 օգոստոս 2017թ., ժամը՝ 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

1. Հ. Խաչատրյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի հակահրդեհային պատրաստության ցիկլի պետ

Անդամներ՝

2. Լ. Վարդանյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կրտսեր մեթոդիստ
3. Տ. Մարգարյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ինժեներ ծրագրավորող

Համակարգող՝

4. Ա.Գևորգյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնումների գծով մեթոդիստ

1. ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝

1.1 **«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/1»** ծածկագրով ընթացակարգին **«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Այթի Սուփորթ» ՍՊԸ-ն և «Երևան Տելեկոմ Սոլուշնս» ՓԲԸ-ն** հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն, և մասնակիցների ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 Ընտրված մասնակիցները սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել են հրավերով պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և

իրականացված հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

- «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի **1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ** չափաբաժինների մասով ընտրված ճանաչել **«Այթի Սուփորթ» ՍՊԸ-ին**:
- «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի **2-րդ, 4-րդ, 8-րդ և 10-րդ** չափաբաժինների մասով ընտրված ճանաչել **«Կոմպմարկետ» ՍՊԸ-ին**:
- «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի **7-րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Երևան Տելեկոմ Սոլուշնս» ՓԲԸ-ին**:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝

2.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

2.2 Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

2.3 **«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/1»** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
Հ. Խաչատրյան _____

Անդամներ՝
Լ.Վարդանյան _____

Տ. Մարգարյան _____

Քարտուղար՝ Ա.Գևորգյան _____